



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԵՎԸ ԱԶԴԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Այր Արոնի պաշտոնաքերը «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի դեկտեմբերի համարում հրատարակվեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սահմանադրության նախագիծը, որն ուղարկվեց մեր քալոր նվիրապետական Արքունիքին և քեմերին՝ ի գիտություն և ի բնեարկում:

Ազգային-եկեղեցական նոր Սահմանադրության նախագիծը արդեն իսկ ժողովրդական լայն բնեարկման առարկա է դարձել, և մեր եերժին քեմերում և՛ Սփյուռքում:

1958 թվականի հոկտեմբեր 16—23 օրերին, Մայր Արքունի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ գումարված ծափական ժողովը բնենց Մայր Արքունի կողմից եերկայացված նախագիծը և միշտ լրացումներից ու փոփոխություններից նետո, այն նորից եերկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Մայր Արքունի խմբագրված ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագիծը պատրաստելիս նկատի են առնված՝

1. Առաքելական, տիեզերական՝ երեք, արտաքին, տեղական՝ վեց, գուտ ազգային՝ 16 ժողովների կանոնները, մեր եկեղեցական սուրբ ավանդությունները և հայրապետականաստ կանոնները:

2. Հայ եկեղեցու հատուկ սահմանադրական ժողովրդավարական սկզբունքները:

3. 1945 թվականի եկեղեցական Սահմանադրության նախագիծը, որը ներկայացվել է 1945 թվականի նունիսի 19-ին, Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական սրբագրության ժողովին:

4. 1955 թվականի հոկտեմբերի 5-ին, Մայր Արքունի կողմից պատրաստված և Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ հիստին ներկայացված Սահմանադրության նախագիծը, որը 1945 թվականի նախագծի բարեփոխված և ամրողացված ձեռ էր:

5. 1956 թվականի Կահիրեի նպիսկոպոսական ժողովի որոշման հիման վրա Տ. Նորայր և Տ. Դերենիկ եպիսկոպոսների կողմից 1956—1957 թվականներին պատրաստված նախագիծը:

Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագիծը բնենիս հարկավոր է հանդիս քերել իմաստություն, նեռատեսություն, լավատեսություն։ Ի հառաջազրության շտապողականությունը, կանխակալ կարծիքները, հատվածականությունը կարող են միայն վեաս քերել գործին։ Սփյուռքի հայ մամուլի մի որոշ մասում արդեն իսկ Սահմանադրության նախագծի դեմ առարկություններ եեւացին։ Առանց

հարցի խորը և հանգամանալից բնեարկման, ի հառաջազետ հանքս-հն-բերված մի շարք երկրորդական առարկություններ, կանխակալ կարծիքներ, որոնք ըստ էության այնքան էլ կապ չունեն նախագծի հետ: Այդ առարկությունները կարելի է ամփոփել հետեւյալ կետերի մեջ:

ա) Եկեղեցական նոր Սահմանադրության կարիք չունենք այսօր, որովհետև Հայաստանյաց Եկեղեցին ունի իր Ազգային Սահմանադրությանը, որով նա դեկապարվում է Սփյուտիքի մեջ:

բ) Այսօրվա պայմանների բերումով հենարավոր չէ լիրակ Ազգային-Եկեղեցական օրինավոր ժողով գումարել, Եկեղեցական նոր Սահմանադրության նախագիծը պատշաճ հենակությամբ բննության առնելու համար:

Պատասխաննենք այս հարցերին:

Թուրքիայում 1863—1915 թվականներին, Օսմանյան պետության հետ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու հարարերությունները մի կերպ սահմանված ու մասսամբ ճշտորշված են եղել ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ անունը կրող կանոնադրությամբ:

Ազգային Սահմանադրությունը մինչև 1915 թվականը, մոտ 50 տարի, բայց փաստորեն միայն 30 տարի, ձգում էր կանոնավորել հայ Եկեղեցիների իրավական վիճակը նախկին Օսմանյան կայսրության սահմաններում:

Ազգային Սահմանադրության մեջ առնվազ ժաղովրդավարական սահմանադրական այդ սկզբունքները լաղուց Հայ Եկեղեցու կանոնների և ավանդությունների մեջ նկարագրված սկզբունքներ էին, որոնք սակայն 1863 թվականի Սահմանադրության մեջ բերի կերպով են կիրառվել:

Սահմանադրության մեջ «Ազգային ընդհանուր ժողով» գլխի տակ նշվել է, որ «Ազգային ընդհանուր ժողովը նարյաւ քառասուն Երևանի կուսինաններէ կրաղկանա» (ժողոված 57), որոնց՝

ա) մեկ յօրներորդ մասը, այսինքն խանը, Եկեղեցական Երևանի կուսինաններ, զորս Կոստանդնուպոլս մեջ գտնվող Եկեղեցականը կրնարեն.

բ) Երկու յօրներորդ մասը, այսինքն խանասունը, գալաներեն գալիք, ազգային Երևանի կուսինաններ, ի ամսատուլ, կարողական համաձայնեցնելը, ի ամսատուլ, կարողական համաձայնեցնելը, ի

գ) չորս յօրներորդ մասը, այսինքն ուրուսունը, Կոստանդնուպոլիս թաղերեն ընտրված Երևանի կուսինաններ:

Ենշպես Երևում է Սահմանադրության 57-րդ ժողովածից, որտեղ է մնացել Սահմանադրության ժողովրդավարական ոգին, երգավառի շուրջ Երկու միլիոն հայությանը միայն 40 Երևանի ունենալու իրավունք է արվում, իսկ Կոստանդնուպոլսի մի քանի տասնյակ հազար հայությանը՝ 100. Երևանի խանան:

Զարմանալին, սակայն, այն է, որ Սփյուտիքում դեռևս կան մարդիկ, որոնք ժողովրդավարական սկզբունքների որպես տիպար օրինակ ուզում են. ցույց տալ 1863 թվականի Ազգային Սահմանադրությունը:

Ազգային Սահմանադրությունը գուտ եկեղեցական կանոնադրություն չէ, այլ Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ ժողովրդի Եկեղեցական, մշակութային, իրավական գոյությունը հշտող օրենք: Ըստ Սահմանադրության՝ հայ ժողովրդը Թուրքիայում համարվում էր կրնական, մշակութային համայնք, իր Մայրենի Եկեղեցու շուրջ համախմբված, ինչպես էին նաև Թուրքիայում ապրող այլ փոքրամասնությունները: Այս խնդրով, այսօր էլ Ազգային Սահմանադրությունը ի զորու պետք է նկատել Թուրքիայում, իբրև տեղական օրենք:

Այսօր փոխվել են պայմանները: Հայ ժողովրդը և Հայ Եկեղեցին ցրված են աշխանով մեկ: Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, այսօր պակելի բան երևէ, կանգնել է իր նովելոր, կազմակերպչական-վարչական կյանքն ու գործունեությունը պատկերացնող, կանոնավորող, Եկեղեցական մի ընդհանուր ու միասնական Սահմանադրություն ունենալու աներածեշտության առաջ, մի Սահմանադրություն, որն իր ընդհանուր գծերի մեջ ընդգրկի մեր Ս. Եկեղեցու ամբողջականությունը, իր նվիրապետական բոլոր Աքոռներով, թեմերով և բռվանդակ հավատացյալ ժողովրդով:

Եկեղեցական նոր Սահմանադրությունը պետք է լինի իր ընդհանուր գծերի մեջ Եկեղեցական սահմանադրական օրենքներ գծող մի օրինագիրք, այն պարզ պատճառվ, որ Հայաստանից դուրս գտնվող մեր մյուս նվիրապետական Աքոռները, թեմերն ու Եկեղեցիները, վարչական-կազմակերպչական համատուլ, կարողական համաձայնեցնելը, ի-

րենց կյանքն ու գործունեությունը, համապատասխան պետական օրենքներին և պայմաննեներին, միշտ հավատարիմ մնալով սակայն մեր դարավոր Եկեղեցու հոգեու ավանդներին, ժողովրդավարական սկզբունքներին և մեր ազգային պատմության ոգուն:

Հայ Եկեղեցու տարեգրության մեջ երբեք չեղի մի ժամանակաշրջան, երբ մեր Եկեղեցին ցրված լինի այսինք՝ հինգ ցամաքամասերի վրա:

Իր գավանանով, պաշտամունքով, նվիրապետությամբ, կարգ ու կանոնով, ավանդություններով մի և անբաժան Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին այսօր աշխարհագրականունք ցրված է ամբողջ աշխարհով մեկ: Հայաստանում և Սովետական Միության մեջ ունենք հետեւյալ քեմերը. Արարատյան, Շիրակի, Վետանի և Խմերեքիայի, Ադրբեյջանի և Թուրքիաստանի, Նոր-Նախիչևնի և Հյուսիսային Կովկասի: Սփյուտում ունենք Կիլիկիո Կարողիկոսությունը, Երևանականի Հայոց Պատրիարքությունը, Թուրքիայի Հայոց Պատրիարքությունը (Ստամբուլում), Թավրիզի, Թեհրանի, Սպահանի, Ճեղկաստանի և Շայրագույն Արևելքի, Իրամի, Եղիպատոսի (ներառյալ Երվաշիան և Սուդան), Հունաստանի, Մումինիայի, Բուլղարիայի, Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ-ի հայոց (ներառյալ Կանադան), ԱՄՆ-ի հայոց Կալիֆոռնիայի (ներառյալ Մեքսիկան), Հարավային Ամերիկայի հայոց քեմերը: Դեռ չեն խոսրւ հովվությունների մասին:

Այս բոլորից հետո, պարզ է մեզ համար, թե Եկեղեցական նոր Սահմանադրության դեմ ովեմ են այս գլորում, սուր հոնում: Այդդրանք են, որոնք ոչ մեկ հոգեու իշխանություն չունեն Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու և նրա հավատացյալ ժողովրդի վրա և որոնց նպատակն է եղի և է՝ ամեն զնուլ «համերժացնել» արհեստականուն ստեղծված «անշատումը», անիշխանություն հաստատել և ցրել Սփյուտի հայ հավատացյալ ժողովրդը, ամեն զեռվ բաժանել Սփյուտը Ս. Էջմիածնից և Մայր Հայքներից, հատվածական մենատիրություն հաստատել և շահագործել Սփյուտի հայության՝ որպես հաղաքական զենք Ս. Էջմիածնի. և Հայքներիցի դեմ: Մինչդեռ մեր փրկությունը մեջ է, կարգ ու կանոնի պահպան-

ման մեջ է: Եվ անա Եկեղեցական նոր Սահմանադրությունը մի տեսակ բռնմբ, պատճեղ պիտի լինի նետազյան ամեն տեսակ պատահականությանց, ուժացումների և այլ տիտուր գործողությունների դեմ, գործողություններ, որոնց նպատակն է շլատումը հայ ժողովրդի ազգային Եկեղեցական միասնության և միաւթյան: «Ճրագ է պատուիրան օրինացն» (Առակ 9. 25):

Ինչպես հայտնի է, 1863 թվականի Ազգային Սահմանադրությունը, իրեւ Հայ Եկեղեցու և հայ փոքրամասնությանց իրավական վիճակը նշառող կանոնադրություն, երբեք չը հանաչվել և չի հանաշվում այսօր ևս ոչ մեկ պետության կողմից, ուր ապրում են այսօր հայ փոքրամասնություններ և գործում՝ հայ Եկեղեցիներ, բացի Թուրքիայից:

Նվիրապետական յուրաքանչյուր Արոռ և առաջնորդական թեմ ունի իր ներքին կանոնադրությունը, որն առավել կամ նվազ շափով, իրավական ուժ ունի հաջո համապատասխան պետության, որի հովանու տակ գործում է Հայ Եկեղեցին, համաձայն նույն երկրի պետական օրենքների, օգտվելով օտար Եկեղեցիների և ազգային փոքրամասնությանց համար սահմանված օրենքներից: Այդպիսի կանոնագրություններ ունեն Երևանականի մեր բոլոր քեմերը, այդ բայց Ամերիկայի Միացյալ Նահանգների, Հարավային Ամերիկայի, Ֆրանսիայի, Եղիպատոսի, Մումինիայի, Բուլղարիայի, Իրամի, Պատրիարքությանը և այլ քեմերը:

Արժան է հիշել, թե Կիլիկյան Արոռը ևս ունի իր ներքին կանոնադրությունը, թեև իրավական տեսակինից անորոշ, որի հիման վրա կատարվեցին կարողիկոսական վերջին ընտրությունները: Այսաեղ պետք է նշել նաև այն հանգամանքը, որ Լիքանանի և Միրիայի մեջ, Ազգային Սահմանադրությունը ի գործ նկատելու ենթադրական մի կացություն գոյություն ունի, որը սակայն մինչև այսօր ոչ ոքի կողմից հստակ կերպով ձևակերպված չէ և ոչ էլ կենսագործված: Խսկ եք նույնիսկ Ազգային Սահմանադրությունը, Լիքանանու և Միրիայում, իրավական որոշ ուժ ունենար, ապա նա որևէ ձևով չէր կարող որևէ իրավունք ապահովել և հիմք հանդիսանալ Կիլիկյան Արոռի համար, այն պարզ պատճե-

սով, որ Կիլիկյան Արոռի ճիշտակուրյունի իսկ չկա Ազգային Սահմանադրության մեջ: Ազգային Սահմանադրության մեջ իրավական տեսակետից Կիլիկյան Կարողիկոսությունը գոյություն չունի:

1863 թվականի Ազգային Սահմանադրությունը բրեհանայ ժողովրդի եկեղեցական, ազգային, մշակութային, կրաքան մեկ ստատուսն էր Օսմանյան կայսրության մեջ, այնպես ինչպես Պոլոժենիան արևելահայերի մեջ:

Եկեղեցական նոր Սահմանադրությունը լինելու է ԶՈՒՏ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ԿԱՆՈՆՆ-ԴՐՈՒԹՅՈՒՆ ամրող հայության համար, «Հայ Եկեղեցու Սահմանադրություն» անվան տակ: Հետեաբար պարզ է, որ 1863 թվականի արևմտահայ Ազգային Սահմանադրության և մեր նոր կազմվելիք Եկեղեցական Սահմանադրության միջև ճմանության և համեմատության եղբ չի կարող լինել, և ոչ էլ մեկը մյուսին փոխարինելու հարց կարող է ծագել:

Եկեղեցական Սահմանադրության հայագիտի ճնճարկման առքիվ, առարկվում է նաև, որ մեր այսօվա պայմաններում դժվար է օրինավոր և ամրողական Ազգային-Եկեղեցական ժողով գումարել, վերջնական ճնճարկման ենթարկման համար Սահմանադրության նման հախագիծը:

Ինչպես հախորդ առարկությունը այս վերջին առարկությունն էլ նիշտ չէ: Ինչո՞ւ կարելի չէ օրինավոր Ազգային-Եկեղեցական ժողով գումարել:

1945 թվականի հունիսի 16-ին, Հայրենական Մեծ պատերազմի ավարտից մեկ ամիս հետո միայն, Մայր Արքուն գումարվեց Ազգային-Եկեղեցական ժողով, զբաղվելու համար կարողիկոսական ընտրության և այլ հարցերով: Այս ժողովի բացառիկ նշանակությունը կայանաւ էր նրանում, որ դա մեր առաջին ժողովն էր իր լրիվ և ներկայացնական հանգամանքով, որին իրենց մասնակցությունը բերել էին Մայր Տաճա Կիլիկիո Կարողիկոսության պատգամավորությունը՝ Գարեգին Եկեղեցական պատգամավոր Պատրիարքությունը՝ Կյուրեղ Բ պատրիարքի, Կոստանդնուպոլիսի պատրիարք ամենայափիլ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը պատրաստվում էր անձամբ ներկա գտնվել ընտրության, երբ 1955 թվականի Մայրաքանչ սպատեմբերյան հայտնի դեպիերը պատճառ դարձան, որ պատրիարք պրերացնը անձամբ չկարողանա ներկա գտնվել ժողովին: Այնուամենայնիվ Կոստանդնուպոլիսի Պատրիարքությունը Ազգային-Եկեղեցական ժողովում լիազորված էին ներկայացնել Մայրեարքի կողման Սիրունյանը, Վագգեն Եպիսկոպոս Պալմյանը, պատգամավոր մեծանուն բանաստեղծ Ավետիք Խանակյանը, Հրանտ Խասիպյանը և Լևոն Տեր-Ավետիսյանը:

Տեղոր արքեպիսկոպոս Ասլանյանի գլխավորությամբ, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան և Արևմտյան Հարավային Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Թեհրանի, Արտավատականի, Երանեականի կովկասի թեմերի եկեղեցական և աշխարհական պատգամավորները: 1945 թվականի ազգային-Եկեղեցական ժողովին մերկ 111 պատգամավորների մեջ մեծամասնություն էին կազմում թեմերի աշխարհական պատգամավորները:

1955 թվականի սպատեմբերյան Մայր Արքուն գումարված Ազգային-Եկեղեցական սրբագրությար ժողովի պատմական ճշանակությունը նույնպես կայանում էր նրանում, որ հայրապետական նոր ընտրության մասնակցում էին Հայ Եկեղեցու նվիրապետական բայր Արքուները և մեր բոլոր թեմերը: Մեծի Տաճա Կիլիկիո Կարողիկոսությունը ժողովում ներկայացված էր պաշտոնապես երկու աշխարհական և մեկ հոգևորական պատգամավորներով: Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը նույնպես երկու եպիսկոպոս և մեկ աշխարհական պատգամավորներով, Կոստանդնուպոլիսի պատրիարք ամենայափիլ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը պատրաստվում էր անձամբ ներկա գտնվել ընտրության, երբ 1955 թվականի Մայրաքանչ սպատեմբերյան հայտնի դեպիերը պատճառ դարձան, որ պատրիարք պրերացնը անձամբ չկարողանա ներկա գտնվել ժողովին: Այնուամենայնիվ Կոստանդնուպոլիսի Պատրիարքությունը Ազգային-Եկեղեցական ժողովում լիազորված էին ներկայացնել Մայրեարքի կողման Սիրունյանը, Վագգեն Եպիսկոպոս Պալմյանը, պատգամավոր մեծանուն բանաստեղծ Ավետիք Խանակյանը, Հրանտ Խասիպյանը և Լևոն Տեր-Ավետիսյանը:

Թեմերից ընտրության մասնակցում էին Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան և Արևմտյան թեմերի, Հարավային Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Եգիպտոսի, Դամասկոսի, Հնդկաստանի, Արտավատականի, Երանեականի, Արտավատականի, Արտավատականի և

Թուրքեստանի, Վրաստանի, Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի թմբերի 137 եկեղեցական և աշխարհական պատգամավորներ: Ազգային-եկեղեցական ոչ մի ժողով վերջին ժամանակներում չի ունեցել երեխնան ներկայացուցչական կազմ և պատգամավորների մեծ թիվ, ինչպիսին էին 1945 և 1955 թվականների Ազգային-եկեղեցական ժողովները:

Ի՞նչ հանգամանք կարող է խանգարել նաև իրապես պատկառելի Ազգային-եկեղեցական ժողովի գումարմանը, 1960 թվականին կամ հաջորդ տարիներին: Կանոնական տեսակեսից մի՛քել ճվագ օրինավոր Ազգային-եկեղեցական ժողովներ են եղել այն ժողովները, որոնց մասնակցել են ճվագ բյուլ պատգամավորներ: Այսպես օրինակ՝ 1885 թվականի ապրիլին Մայր Աթոռ Ս. էջմիածնում Մակար կարողիկոսի ընտրությանը մասնակցել են «20 եկեղեցականներ 22 ձայնով և 8 աշխարհական պատգամավորներ միայն» (Օրմանյան, «Ազգապատում», Գ. հատ., էջ 4537): Բայց այս ժողովի համարվել է օրինավոր: 1892 թվականի մայիսին, Խոհմայան Հայրիկի համազգային քննությանը մասնակցել են 77 պատգամավորներ միայն, «տանկահայոց կողմէ մեծ Արոռներու երկու պատրիարքաց ներկայացուցիչներ ներկա, իսկ երկու կարողիկոսացը պակաս, վիճակներեն... 21 պակաս» (աճե, էջ 4691):

1908 թվականի հոկտեմբերին կոմիտյան կարողիկոսի ընտրության չի մասնակցել Սահմանական պատգամավորները, որովհետև «կիմիլիկիոն կարողիկոսության միակ հրավի-

րագիրը դրկված էր հանուն Աթոռի, մինչ ինքը կապահանջեր, որ 13 վիճակներ զատցատ ներկայացվին ընտրական ժողովին մեջ» (աճե, էջ 5405), այնուամենայնիվ Ազգային-եկեղեցական ժողովը 77 ձայնով նզմիրլյանին ընտրում է Ամենայն Հայոց Կարողիկոս: 1911 թվականի դեկտեմբերին Գևորգ Ե-ի ընտրությանը մասնակցել են 80 պատգամավորներ: Ընտրությանը նորից չի մասնակցել Կիլիկիայի Կարողիկոս Սահման թ Խապայանը: Ժողովի նրավիրված 71 հոգեորական պատգամավորներից ներկա են եղել միայն 51 հոգի, իսկ 57 աշխարհական պատգամավորներից՝ 29 հոգի միայն («Երարատ» ամսագիր, 1911 թ., դեկտեմբեր):

Վստահ ենք և խորապես համոզված, որ 1960 թվականին Մայր Աթոռում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովը ևս կիմի լրիկ ներկայացուցչական և համազգային ընույթի եկեղեցական մեծ ժողով, ուր հետ նննության, մեր եկեղեցին կօժտվի նոր Սահմանադրությամբ:

Սահմանադրության հախագիծը, Ազգային-եկեղեցական ժողովի հաստատումից և վավերացումից հետո, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով պաշտոնապես կմրապարակի և կմտնի Հայ եկեղեցու կյանքի մեջ:

Եկեղեցական նոր Սահմանադրության մշակումն ու կիրառումը մի նոր ու պայծառ ուղի բաց կանի մեր Ս. Եկեղեցու առաջ և կիմի Հայաստանյաց եկեղեցու նորագույն պատմության հիշատակության արժակի ձեռնարկումներից մեկը:

